ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/30

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Նոր Արաբկիր» ԱԿ ՓԲԸ
Բողոք բերող՝ «Արջիջի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Նոր Արաբկիր» ԱԿ ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Գևորգյանին,
«Արջիջի» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Փոթոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՆԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, դեղորայքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Արջիջի» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 17.03.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել պատվիրատուին «ՆԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/9» ծածկագրով գնանշման ընթացակարգի հրավերում կատարել բողոքում նշված կետերի շտկումներ և փոփոխություն կատարել հայտերի ներկայացման վերջնաժամկետում:

Բողոքներ քննող անձին «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 17.03.2022թ.-ին:

17.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/30 համարի ծածկագիրը:

24.03.2022թ.-ին ն և 08.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 24.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.04.2022թ.-ին:

2. «Արջիջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արջիջի» ՍՊԸ-ն 17.03.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Նոր Արաբկիր ԱԿ ՓԲԸ-ն հայտարարել է ՆԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/9 ծածկագրով գնանշման հարցում:

Հրավերի պահանջները ուսումնասիրելիս հայտնաբերվել են բազմաթիվ կետեր, որոնք խախտում են գնումների մասին ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության որոշումներով սահմանված պահանջները:

Մասնավորապես,

ա) հրավերով սահմանված է, որ

- *Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ճանաչվելուց հետո մինչև հայտարարությունը հրապարակելը մատակարարը պետք է ներկայացնի հաղթող ճանաչված դեղորայքի օրինակ, որը տվյալ պահին ստուգվելու է ՀՀ ռեեստրում գրանցված է թե ոչ, հետո նոր կհրապարակվի հայտարարություն պայմանագիր կնքելու վերաբերյալ:*

Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի՝

4. Չեն կարող սահմանվել մասնակցի գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

Սույն մասով պարզաբանումների համար նախատեսված ժամկետում դիմել ենք պատվիրատուին, սակայն ստացել ենք պարզաբանում, որը մեր առաջ քաշած հարցերի հետ կապ չունեն:

բ) հրավերով սահմանված է, որ

- *Գնային առաջարկ ներկայացնել միայն ՀՀ ռեեստրում գրանցված դեղորայքի համար, յուրաքանչյուր պատվերի մատակարարման ժամանակ այն ստուգվելու է, հարգելի մասնակիցներ պահանջում ենք ուշադիր լինել նշված հղմանը:*

Սույն կետի շուրջ Պատվիրատուի կողմից տրված պարզաբանումը ընդհանրապես անհասկանալի է: Ըստ պարզաբանման, եթե հայտը ներկայացնելու պահին դեղը ներառված է դեղերի պետական գրանցումատյանում, իսկ պայմանագիրը կնքելուց հետ 2-3 ամիս անց դեղի գրանցումը ավարտվում է, ապա տվյալ դեղը, որը ներառված է արդեն պայմանագրում, պատվիրատուի կողմից չի ընդունվելու:

գ) հրավերով սահմանված է, որ 10.2 Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի չափին:

ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին էնթակետի գ. Կետի համաձայն՝

Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

-չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

Համաձայն գնումների մասին օրենքի հոդված 22-ի 1-ին կետի

1. Գնումը կարող է կատարվել գնանշման հարցման ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, և գնման առարկան ներառված չէ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում:

Այնինչ պատվիրատուն պահանջում է գնային առաջարկի 100 տոկոսին չափով որակավորման ապահովում:

Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի՝

4. Չեն կարող սահմանվել մասնակցի գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին էնթակետի գ. Կետի համաձայն

Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

Համաձայն գնումների մասին օրենքի հոդված 22-ի 1-ին կետի՝

1. Գնումը կարող է կատարվել գնանշման հարցման ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, և գնման առարկան ներառված չէ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում:

Այնինչ պատվիրատուն պահանջում է գնային առաջարկի 100 տոկոսին չափով որակավորման ապահովում:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել պատվիրատուին «ՆԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/9» ծածկագրով գնանշման ընթացակարգի հրավերում կատարել բողոքում նշված կետերի շտկումներ և փոփոխություն կատարել հայտերի ներկայացման վերջնաժամկետում:

3. <u>«Նոր Արաբկիր» ԱԿ ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 17.03.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/4540-2022 գրությամբ դիմել է «Նոր Արաբկիր» ԱԿ ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով

«Արջիջի» ՍՊԸ-ի կողմից 17.03.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն, 21.03.2022թ.-ի թիվ 039 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Կանխավ ներկայացնում ենք այն պատճառը, թե ինչու է պոլիկլինիկայի կողմից հրավերում նշվել ներքոոշյալ հողումները: <<Նոր Արարկիր>> ԱԿ ՓԲԸ-ի և <<Ջիարջի>> ՍՊԸ-ի միջև կնքված 20.12.2021թ. N3 «ՆԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/2» ծածկագրով պայմանագրին համապատասխան <<Ջիարջի>> ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է դեղորայք: Պոլիկլինիկայի կողմից դեղորայքները ՀՀ ռեեստրերում գրանցված լինելու վերաբերյալ տվյալների ստուգման համար մատակարարված դեղորայքը գրությամբ ուղարկվել է <<Ակադեմիկոս է. Գաբրիելյանի անվ. դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն>> ՓԲԸ-ին:

Համաձայն <<Ակադեմիկոս է. Գաբրիելյանի անվ. դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն>> ՓԲԸ-ի կողմից ուղարկված 21.02.2022թ. N 0106021022 գրության «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից մատակարարված դեղորայքները ՀՀ ռեեստրերում գրանցված չեն: Պոլիկլինիկայի կողմից մի քանի անգամ գրավոր տեղեկացրել ենք մատակարարին, որ իրենց կողմից մատակարարվել է ՀՀ ռեեստրերում չգրանցված դեղորայքներ, որի համար խնդրել ենք տալ պարզաբանում և պոլիկլինիկային մատակարարել միայն ՀՀ ռեեստրերում գրանցված դեղորայք, սակայն իրենց կողմից ոչ մի պարզաբանում կամ ապրանքի փոխարինում չի կատարվել համաձայն պայմանագրի 2. 1. 7 կետի կատարվելն պայմանագրի միակողմանի լուծում:

Պոլիկլինիկան իր աշխատանքում դեղորայքի ձեռք բերման և բնակչությանը տրամադրելուն առաջնորդվում է միայն 17 մայիսի 2016թ. <<Դեղերի մասին>> ՀՀ օրենքով: Համաձայն 17 մայիսի 2016թ. <<Դեղերի մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի այն է.

1. Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

Մատակարարի կողմից բացարձակ անտարբերության և սխալ աշխատանքի պատճառով ամբողջությամբ տուժել է պոլիկլինիկայի բնականոն աշխատանքը և անվճար ու արտոնյալ պայմաններով դեղորայք ստացող հիվանդներին դեղորայքի տրամադրումը:

Հինք ընդունելով վերոգրյալը պոլիկլինիկան 10.03.2022թ. gnumner.am կայքում տեղադրել է հրավեր, որում նշված էին հետևյալ հղումները.

- *Գնային առաջարկ ներկայացնել միայն ՀՀ ռեեստրերում գրանված դեղորայքի համար: Յուրաքանչյուր պատվերի մատակարարման ժամանակ այն ստուգվելու է: Հարգելի մասնակիցներ պահանջում ենք ուշադիր լինել նշված հղմանը:*
- *Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ճանաչվելուց հետո մինչև հայտարարությունը հրապարակելը մատակարարը պետք է ներկայացնի հաղթող ճանաչված դեղորայքի օրինակ, որը տվյալ պահին ստուգվելու է ՀՀ ռեստրերում գրանցված է թե ոչ, հետո նոր կհրապարակվի հայտարարություն պայմանագիր կնքելու վերաբերյալ:*

Ինչ վերաբերվում է «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից բարձրացրած բողոքին, կապված մեր հրավերի կետերի հետ, պարզաբանում ենք.

ա/ կետի բողոքը վերաբերվում է հետևյալ հղմանը.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ճանաչվելուց հետո մինչև հայտարարությունը հրապարակելը մատակարարը պետք է ներկայացնի հաղթող ճանաչված դեղորայքի օրինակ, որը տվյալ պահին ստուգվելու է ՀՀ ռեեստրերում գրանցված է թե ոչ, հետո նոր կհրապարակվի հայտարարություն պայմանագիր կնքելու վերաբերյալ:

- տեղեկացնում ենք, որ պոլիկլինիկայի կողմից չի խախտվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշման ոչ մի կետ, քանի որ մեր կողմից ներկայացված հղումները չեն սահմանափակում ոչ մի մասնակցի մրցույթին մասնակցելու գործունեությանը: Իսկ Արջիջի ՍՊԸ-ին ի պատասխան նշվել է 17 մայիսի 2016թ. «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի այն /Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի/:

Ի պատասխան վերոգրյալի տեղեկացնում եմ, որ 17.03.2022թ. ժամը 10:30-ին հայտերի բացմանը մասնակցել են թվով 5 /հինգ/ մասնակիցներ, այդ հանգամանքը ապացուցում է, որ մասնակիցների մրցակցությունը սահմանափակող ոչ մի հղում չի կատարվել, կից ներկայացվում է մասնակիցների ծրարները իրենց գնային առաջարկներով:

բ/ կետի բողոքը

- Գնային առաջարկ ներկայացնել միայն ՀՀ ռեեստրում գրանված դեղորայքի համար, յուրաքանչյուր պատվերի մատակարարման ժամանակ այն ստուգվելու է: Հարգելի մասնակիցներ պահանջում ենք ուշադիր լինել նշված հղմանը:

- Մեզ ուղարկված պարզաբանման մեջ նշվել է հետևյալը՝ տալ պարզաբանում վերը նշված կետի շուրջ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դեղը ներառված է ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում /ռեեստր/, սակայն 2-3 ամիս հետո, մատակարարման պահին դեղի գրանցումը արդեն ավարտվել է: Խնդրում ենք պարզաբանել տվյալ դեղորայքը ընդունվելու է թե ոչ:

- Վերոգրյալին ի պատասխան իրենց ուղարկել էինք 17 մայիսի 2016թ. <<Դեղերի մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հողվածի 1-ին մասի և 16-րդ հողվածի 19-րդ ենթակետերը, որը որ հիմնավորում էր, որ համաձայն դեղորայքի մասին օրենքի պոլիկլինիկան չի կարող ընդունել չգրանցված դեղորայք, իսկ մասնակիցը պարտավոր է հայտ ներկայացնելու պահին ստուգել իր դեղորայքի գրանցման ժամկետները և մատակարարաման պայմանները, քանի որ հրավերի պայմանագրի վճարման ժամանակացույցում նշվում է, որ դեղորայքի մատակարարումը կատարվելու է մինչև տվյալ տարվա ավարտը, որը որ ցույց է տալիս իրենց կողմից առաջրկվող դեղորայքը առնվազն 1/մեկ/ տարի պետք է ունենան գրանցում:

Պարզաբանման պատասխանի իմաստը կայանում էր նրանում, որ եթե կազմակերպությունը ցանկանում է մասնակցել մրցույթին գործունեություն ծավալելուց առաջ նախ պետք է ուսումնասիրի ՀՀ օրենքները, իր աշխատանքը համապատասխանեցնի այդ օրենքներին նոր ծավալի գործունեություն, քանի որ իրենց կողմից կատարված յուրաքանչյուր անպատասխանատու քայլի և դեղորայքի ոչ ճիշտ մատակարարման արդյունքում տուժում է բուժհիմնարկների բնականոն աշխատանքը և առավել ևս հիվանդներին ժամանակին ղեղորայք տրամադրումը:

Բացի դա «Դեղերի մասին» ՀՀ օրենքի եթե տվյալ դեղորայքը չունի որևէ խնդիր, որը որ կարող է վնասել մարդուն այն ընդունելուց, ապա տվյալ դեղորայքի գրանցումը տևում է 180 օր, իսկ մինչև դեղորայքի գրանցման ժամկետի ավարտը, եթե տվյալ ղեղորայքը չունի հետագա օգտագործման խնդիրներ, նրա ժակետի երկարացումը կատարվում է օրենի 16-րդ հոդվածի 19-րդ մասին:

Համաձայն վերոգրայլի Արջիջի ՍՊԸ-ի կողմից ներկայացված այս երկու կետերի հղումները անհիմն են, քանի որ պոլիկլինիկան հրավերը կազմելուց առաջնորդվել է

«Գնումների մասին» ՀՀ օրենքի, «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշման և 17 մայիսի 2016թ. <<Դեղերի մասին>> ՀՀ օրենքի համապատասխան, ուստի որևէ սահմանափակման մասին խոսք լինել չի կարող:

գ/ կետի բողոքը

- Հրավերում նշված 10.2 Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի չափին:

- Տեղեկացնում եմ, որ մասնակցի կողմից վերոգրյալի կապակցությամբ որևէ պարզաբանում չի պահանջվել, այդ իսկ պատճառով հրավերի փոփոխություն և պարզաբանում տվյալ մասով չի կատարվել, կից ներկայացնում ենք <<Արջիջի» ՍՊԸ-ի կողմից մեզ ուղարկված գրության պատճեն:

Հարկ եմ համարում նշել, որ տվյալ մասով եղել է մեխանիկական բացթողում: Եթե մասնակցի կողմից պահանջ ներկայացվեր տվյալ կետի պարզաբանում և փոփոխություն մեր կողմից անմիջապես կկատարվեր տվյալ փոփոխությունը: Նշվածի վերաբերյալ պահանջ չի ներկայացվել ինչպես իրենց, այնպես էլ մյուս բոլոր մասնակիցների կողմից:

Հարգելի պարոն Օհանյան բողոքը քննելու ընթացում խնդրում ենք Ձեզ հիմք ընդունել մեր կողմից ներկայացված պարզաբանումների պատասխանները և կից ներկայացված հիմքերը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2022/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նոր Արաբկիր» ԱԿ ՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 10.03.2022թ.-ին հայտարարվել է «ՆԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի 1.1-ին կետով, բացի այլ պայմաններից սահմանվել է, նաև, որ «Գնային առաջարկ ներկայացնել միայն ՀՀ ռեեստրում գրանված դեղորայքի համար, յուրաքանչյուր պատվերի մատակարարման ժամանակ այն ստուգվելու է, հարգելի մասնակիցներ պահանջում ենք ուշադիր լինել նշված հղմանը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ճանաչվելուց հետո մինչև հայտարարությունը հրապարակելը մատակարարը պետք է ներկայացնի հաղթող ճանաչված դեղորայքի օրինակ, որը տվյալ պահին

ստուգվելու է ՀՀ ռեստերում գրանցված է թե ոչ, հետո նոր կիրապարակվի հայտարարություն պայմանագիր կնքելու վերաբերյալ:»:

iii. Ընթացակարգի հրավերի 2.4-րդ կետի սահմանվել է, որ մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնում է որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից 17.03.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի,

ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր

մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի,

աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Նոր Արաբկիր» ԱԿ ՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 10.03.2022թ.-ին հայտարարված «ՆԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1.1-ին կետով, բացի այլ պայմաններից սահմանվել է, նաև, որ «Գնային առաջարկ ներկայացնել միայն ՀՀ ռեեստերում գրանված դեղորայքի համար, յուրաքանչյուր պատվերի մատակարարման ժամանակ այն ստուգվելու է, հարգելի մասնակիցներ պահանջում ենք ուշադիր լինել նշված հղմանը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ճանաչվելուց հետո մինչև հայտարարությունը հրապարակելը մատակարարը պետք է ներկայացնի հաղթող ճանաչված դեղորայքի օրինակ, որը տվյալ պահին ստուգվելու է ՀՀ ռեստերում գրանցված է թե ոչ, հետո նոր կհրապարակվի հայտարարություն պայմանագիր կնքելու վերաբերյալ:», իսկ 2.4-րդ կետի սահմանվել է, որ մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնում է որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված

էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի և Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի սահմանված՝ «Գնային առաջարկ ներկայացնել միայն ՀՀ ռեեստրում գրանված դեղորայքի համար, յուրաքանչյուր պատվերի մատակարարման ժամանակ այն ստուգվելու է, հարգելի մասնակիցներ պահանջում ենք ուշադիր լինել նշված

հղմանը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ճանաչվելուց հետո մինչև հայտարարությունը հրապարակելը մատակարարը պետք է ներկայացնի հաղթող ճանաչված դեղորայքի օրինակ, որը տվյալ պահին ստուգվելու է ՀՀ ռեստերում գրանցված է թե ոչ, հետո նոր կիրապարակվի հայտարարություն պայմանագիր կնքելու վերաբերյալ» պայմանը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի և բավարար ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՆԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը այդ մասով կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 21-րդ և 22-րդ կետերի դրույթներին, սահմանված վերոնշյալ պայմանը չի խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Ինչ վերաբերում է ընթացակարգի հրավերով սահմանված «մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնում է որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով» պայմանին, ապա ուսումնասիրելով «Արջիջի» ՍՊԸ-ի բողոքը, դրանցում առկա իրավական ու փաստական հանգամանքները, համադրելով Պատվիրատուի կողմից ներկայացված գրության փաստարկներին՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ պայմանը չի համապատասխանում Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված պահանջներին, քանի որ որակավորման ապահովման չափը գնման հայտով նախատեսված գինը գնումների բազային միավորի յոթանասունապատիկը չգերազանցելու դեպքում հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից 17.03.2022թ.-ին ներկայացված բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով, Կարգի 21-րդ և 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Նոր

Արաբկիր» ԱԿ ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՆԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգն ենթակա է փոփոխման:

Ուստի, վերը բերված եզրահանգումների ու դատողությունների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից 17.03.2022թ.-ին ներկայացված բողոքը պետք է բավարարել և պարտավորեցնել «ՆԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնահատող հանձնաժողովին կատարել սույն որոշմամբ նշված փոփոխությունները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից 17.03.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/30 ծածկագրով բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՆԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնահատող հանձնաժողովին կատարել սույն որոշմամբ նշված փոփոխությունները: Փոփոխություն կատարելու անհնարինության դեպքում գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**